



Պատասխանատու  
Յովհաննես Փիլիսեան

# ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՆՆԻՅ

Նամակքն ուղղելի են  
առ Վ. Գ. Պալապարեան

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱՌԱՍՆԵՐՈՐԳ ՏՆՐԻ

ԶՄԻՒՆՆԻՅ ՇԱՐԱԹ 12 ԱՊՐԷԼ 1880

ԹԻՒ 1142

### ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՊՂԻԱ : Եւրոպական թերթերէն շատերն  
եւ նշանակութիւն կ'ընծայեն յորտ Հարթ ինկ-  
լի Մարտ 25ին Նորթ—Կոլ—Լանքաշայրի  
էջ խօսեցած ճառին . որով յիշեալ մարտի  
Անգղիոյ աղատականոց պարագլուխն է , կը  
ատարարուէ լորտ Պի. քոնսֆիլտի նախարարու-  
թեան թուրքիոյ նկատմամբ բռնած աշխարհա-  
արուածիւնը . ցոյց տալով թէ՛ թուրքիոյ համար  
անեղանակարեւոր ճանչցուած և սրահանջուած բա-  
նեւորոյ ու մեծերն իրագործելու մասին զրուսոր  
անակցութիւններով միայն բաւականացած  
որչա արդիւնք մի չէ ունեցած : Լորտ Հարթ ինկ-  
լին կը յարէ նաեւ թէ՛ թուրքո—ուսական  
կրօնի պատերազմը տեղի չէր ունենար եթէ  
քրիստոնական կառավարութիւնն տարբեր բն-  
ացք մի բռնած ըլլար : Այնքան արիւնհեղու-  
թիւն , և տառապանք ինչպէս և կ'ըլլային եթէ  
բնականախորհրդին առաջարկած բարենորոգ-  
մանց զիջանէր թուրքիա , որոյ բնական հետե-  
ւութիւնն կ'ըլլար Ռուսիոյ չէզոքանալն , որով  
պահիւ և խաղաղասիրական կերպիւ թէ՛ պար-  
տաւարաշաճ բարենորոգումներն կ'իրագործու-  
ին , և թէ՛ արդի թշուառութեանց առաջքն  
առնուէր :

Լորտ Հարթ ինկլին բնագործակորէն և ազդու  
կերպիւ բացատրելով իրաց պարագայներն  
որտ Պի. քոնսֆիլտի և իւր նախարարութեան  
ունեցած աշխարհավարութեան եղանակին կը վե-  
տադրէ վերջին պատերազմին , և նորա ձախող  
ստեղծանաց պատճառներն , միանգամայն սպա-  
ւառանքով մէջ աղատականաց և նոր կազմուելու  
նախարարութեան բռնելիք ընթացքին հիմնա-  
կան կէտերն կը ծրարէ :

Կը հաստատեն թէ՛ լորտ Պի. քոնսֆիլտ և իւր  
նախարարութիւնն պատրաստուած են որ Անգ-  
լիոյ թագուհւոյն Գերմանիայէն , ուր այցելու-  
թիւն կ'ընէ , վերագ առնալուն խմբովին իրենց  
նրաժարականը Նորին վեհափառութեան ներ-  
կայանեն :

ԳԱՂՂԻԱ : Թէ զուիթներու և ոչ—արտօնուսոր  
նրանական միաբանութեանց նկատմամբ Մարտ  
29ին ելած հրամանագրին դէմ բողոքներու  
թիւր երթալով կը շատնայ Գաղղիոյ մէջ : Յիշեալ

հրամանագրի պարունակութիւնը արդարացի  
կըլ տնէ Նարդէօն իշխանն առ իւր մէկ բարե-  
կամն Ապրիլ 5 թուով ուղղած նամակին մէջ ,  
և իւր կատարեալ հաճութիւնը կը յայտնէ : Նո-  
րա հաւանութեան սոյն գրին դէմ կը բողոքեն  
նոյն իսկ կարգինս Պոնաքարթ , և իւր եղբայրն  
Շարլը Պոնաքարթ իշխանը : Այսպիսի բողոքնե-  
րու առաջքն առնելու միջոցներ կը պատրաստէ  
կառավարութիւնը :

ՌՈՒՍԻԱ : Զինական պետութեան և Ռուսիոյ  
մէջ պատերազմական ձեւաւարութիւն մի ինչ  
հաւանական կը նկատուի . թէ և նոյա դեպքա-  
նական յարաբերութիւնք շարունակութեան  
մէջ կը պահուին : Արդէն հինգ ուսական մոր-  
տանաւեր զրկուած են Չինաց ծովերն , սոյն նա-  
ւախմբի հրամանատար ծովապետին տեղ առա-  
ւել զորաւոր մէկու մը հրամանին ներքե :

Կարչաքօֆ իշխանին հիւանդութեան վիճակը  
ճանր է : Զրոյց կայ թէ՛ Օրլոֆ իշխանն առա-  
ջիկայ ամառ Կարչաքօֆին տեղ պիտի յաջորդէ :

### Տես լրագրոյն մախ ճիւղաց քիւր :

ԽԺԲ.—Կրնան վաւերական տեղեկութիւններ  
հաղորդել ինձ Մոսկուայի դէպքին վրայ :

Հարլ.—Ո՛չ այոք : Գու զիս տեսնելդ անշուշտ  
պիտի հեռագրուի Բէրլինի դէպքին : Հետեւաբար  
իմ կողմէ ամենափոքր անընտրողութիւն այն  
տեղի բարեկամներու մատնուելը պիտի պատ-  
ճառէ : Երբ ինչպէս զգուշութեան ժամանակն  
անցնի իսպառ , ես ամեն բան պիտի յայտնեմ :

ԽԺԲ.—Կարելի՞ է արդեօք բացատրես ինձ  
թէ ինչ հարկ կար երկաթուղիի գիծէն ոչ յոյժ  
հեռի տուն մը վարձել , և գետին փորել քանի  
որ նպատակ կար միմայն կայսերական շոգե-  
կառքը գիծէն խոտորեցնելու մտաւալել :

Հարլ.—Պարոն , երբ կայսրը ուղևորութիւն  
ընէ , նորա շոգեկառք առջև բազմաթիւ շո-  
գեկառքեր կը դրուին . . . ինչպէս և նորա ու-  
տելիքներու ապահովութիւնը իմացուելու հա-  
մար յատուկ նախաճաշակող պաշտօնեայնեք  
կարգուած են . . . Եւ միթէ չգիտե՞ս որ կայ-  
սեր շոգեկառքին անցնելու ժամանակ , գծին ջ  
կողմերն կը պահպանուին զինուորներու , ոստի-  
կաններու և կայսերական կալուածոց շինական-  
ներու մեծ բազմութեամբ . և ո՞վ որ գծին մեր-

ձենայ 100 մէթր չէն նուազ , անմիջապէս կաս-  
կածի ենթարկուելով՝ Ոստիկան կը տարադրի .  
ԽԺԲ.—Բայց ճշմարտն ըսէ ինձի , ստուգա-  
պէս վարձակալն էիր այն տան , ուր ելէ կտրա-  
ցեալ հրազեններն դեռեղուած էին :

Հարլ.—Առ ժամն ներքէ՛ լուծեանս : Արդի  
պարագայից մէջ չեմ կարող և ոչինչ խոստովա-  
նութիւն մի ընել . . . Ռուս ոստիկանութիւնը  
կը շատտատէ թէ ես եմ դաւանաց հեղինակը .  
սակայն իւր առաջարկութեան ստուգութիւնը  
ապացուցանելու ինչպէս մէջ ես բողոքովն  
անհօգ կը մնամ :

ԽԺԲ.—Ը՞սէ ինձ , ինչ դեմ , եթէ դաղիական  
կառավարութիւնն զքեզ Ռուսիոյ ձեռք յանձ-  
նէր , ինչ պիտի ընէին քեզ :

Հարլ.—Ռուս դատաւորներն Ձարին ծառայ-  
ներն են , զիս հարցափորձի և անողորմ տանջա-  
նոց պիտի մատնէին , որպէսզի ընկերակցաց  
անունները յայտնեմ : Եւ կեղծ դատաքննու-  
թեան մի ետք պիտի կախուէի Սօլովիէֆի և  
վրտէցքի նման :

ԽԺԲ.—Ինչու որութիւնդ մահուանէ երկնչո՞ղ է :

Հարլ.—Ո՛չ մենք ամենքս անձնուրաց մարդիկ  
դարձած եմք :

ԽԺԲ.—Ինչպէս եկար Բարիդ . . . Կ. Պոլսէն :

Հարլ.—Ո՛չ ուղղակի եկայ հոս երկաթուղիով :

ԽԺԲ.—Ո՛ր ի՞նչար :

Հարլ.—Նախ պանդոկը , ետք բնակեցայ  
Սենթ Օնորէ փողոցը , Սեն Ֆելիքս տը բուլ հրա-  
պարակին մէջ երէնտագործ Պերարի տունը :

ԽԺԲ.—Շանղէլիդէ մէջ երբ գործակալներն  
քեզ բռնեցին՝ ո՞վ կար քովդ :

Հարլ.—Մեր ինչոյն բողոքովն անտեղեկ  
քանի մը անձինք կային , որոց հետ Բարիդի մէջ  
դեռ նոր սկսած էինք տեսնուիլ , կը պատրաս-  
տուէինք երթալ բանտարան տեսնելու :

ԽԺԲ.—Ռուս ոստիկանութիւնն քու Բարիդ  
ըլլալդ ինչպէս կըցած էր իմանալ :

Հարլ.—Լեհացի հրէայ մը զիս Օրլոֆ իշխանին  
(Ռուս դեսպանի Գաղղիա) մատնեց : Բարիդ  
մտնելէս քանաւուն օր ետք բռնուեցայ :

ԽԺԲ.—Բայց ինչպէս դտան բնակարանդ :

Հարլ.—Տարակոյս չկայ որ Բարիդի ոստիկանու-  
թեան գործակալներն Բէրլինի ոստիկանաց  
օգնեցին :

(Շարունակելի)

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### Ի Տ Օ Ն

#### ԱՒԵՏԵԱՑ ԱՄԵՆԱՍԻՐԲ ԿՈՒՍԻՆ

Ի կրէտոսեան ճոխ գանձուց թափուր ի վանն ինչ ուրեք :  
Յեասեանն հսկէր Շառաւիղ՝ կուսան ըզգայք և զցերեկ :  
Հրաչից տաճար բանաւոր , սեղան կանգուն յանձին իւր :  
Ուր սիրտն սպանդ անարիւն սղծակիզէր և անհուր :  
Սրբանուէր կուսութեան թագ՝ հրեշտակաց զուգափառ ,  
Յիւր բոլորեալ ճակատու սուրբ պաշտամանց կայր պատկառ :  
Երգոց երգոյն Հարսն անբիծ , իբր աղանի ի հովտէ  
Մնչէ բարբառ սրտառուչ , և զհայրենին ծոց ժբատէ .  
Հանգոյն և Ոս ճինճերէր՝ լքեալ զկենցաղ չարաբասս՝  
Յանմահական փետային մտել ի սուրբ առագաստ :  
Մինչ կրկնաթ կաթոյի զերծիլ յեթիւրս ըլծայր նա ,  
Ինչն եթերք յանկարծ իմն օթագայել առ նմա :  
Յի ի ծուէնս փեռեկեալ քոյ խորանին կապուտակ՝  
Ընդ յուսահետս անընդել էջ Գարբիէլ պետ հրեշտակ :  
Ողջոյն ընդ քեզ լի շնորհօք , ողջոյն ընդ քեզ , Մարիամ ,  
Եւն , յերկնից ահա ես պատգամարեւր առ քեզ զամ :

Չի՞ դու խռովիս այլ յայլմէ , և ի խորհուրդքս ծփաս ,  
Մինչքեռ ընդ քո անղոյգ փառս արփածեմից պշուռ դաս :  
Մի՛ երկնչիր , ուրախ լիւր , դըտեր չընորհս յԱստուծոյ ,  
Չի հարսնացիս Անմահին . և կուսական ի ծոց քոյ  
Անժամանակն յաւիտեանց անորինեսցի Հօրքն բան ,  
Փրկիլ զաշխարհ ի մեղաց , թագաւորել անվախճան :  
Հրաշացաւ կոյսն ի լուր երկնազդեցիկ պատգամին ,  
Եւ ըզհայեցայսն աղու շրջեաց մեղմիկ ի գետին :  
« Զիմրօ ինձ այդ , ո՛ր բանբեր , լիցի երբէք բընաւին ,  
Որ ոչ դրժել կամ է ինձ արբուն տիողքս ուխտին »  
Կրկնեաց անդէն Գարբիէլ . « Չիք անհնար Հօրին ,  
Անշուշտ լիւր դու : Կոյս արդար , լիցիս այժ մայր Բանին .  
Այլ անարատ և անբիծ կացցէ մինչև յաւիտեան  
Անբողակէզ ի հրոյն քո տաղաւար մաքրութեան .  
Ամենազոր զի Հօգին Աստուած գայցէ այժմ ի քեզ ,  
Եւ հովանի Բարձրելոյն զքեւ փարեցի հրաշապէս »  
Խոնարհեցաւ կոյսն անդէն . առէ , « Ես ճեառն աղախին՝  
կամ աւասիկ՝ եղիցի ինձ ըստ բանի քո բնաւին »  
Չոյք ընդ բանին էջ անդէն Հօր բարձրելոյն Միածին  
Բնակիլ յարգանդ սրբասունն աստուածազգեացն կուսին :

Զմիւռնիս , 7 Ապրիլ 1880

Ս. Ս. Յ. Պ.

ՕՍՄԱՆԵԱՆ ԱՇԽԱՐՀԱՀԱՆԳԼՍ Ի ԼԷՅՐԵԿԻԿ

Մեր յարգոյ բարեկամներէն մին Լէյրցիկի մէջ հրատարակուած շրջաբերական ծանուցագիր մի յուղարկած է մեզ, յորմէ հետեւեալկարեւոր տեղեկութիւններն կը քաղեմք :

Օսմանեան ապրանքներու Աշխարհահանդէս մի տեղի պիտի ունենայ Լէյրցիկի մէջ, որ Գերմանիոյ առևտրական գլխաւոր կեդրոնատեղիներէն մին, և իւր տօնավաճառներովն յոյժ նշանաւոր քաղաք է :

Սոյն աշխարհահանդէսն պիտի սկսի ներկայ 1880 տարւոյ Յուլիս 1էն, և պիտի տևէ մինչև ց15 Հոկտեմբեր տարւոյ :

Միայն ճանկաստանի արդիւնք եղող համայն ապրանքներ, մանաւանդ որոնք որ զուտ արեւելեան ճաշակով արուեստագործեալ են, սոյն աշխարհահանդիսի մէջ ներկայանալի նիւթերն կը կազմեն. ըստ սրում աշխարհահանդէսն լոկ ճանկաստանի յառաջ բերած ապրանքներու համար սահմանուած է :

Աշխարհահանդէսն պիտի ընդունի նիւթերու հետեւեալ տեսակները .

Ա. Գործածուելի ինչպէս՝ գորգեր, օթոցներ, յատակի ծածկոցներ, սեղանի ծածկոցներ, ցլփսիներ, պարտիզներ, վերաբերեալ կերպաններ, բազանեաց հագուստներ, դեմքակներ, գօտիներ, անձեռոցներ, բարձի և բաստեռի երեսներ, պարզ և ոսկեթելով բանուած :

Բ. Կաշիէ՝ ինչպէս՝ համեաններ, կոշիկներ, հողաթափներ, թղթակաշիներ, պատեաններ և այլն :

Գ. Փայտեայ և փղփղեայ ինչպէս՝ ձիթեանի, ընկուզենիի, Վերենտի (բանուած և չբանուած) փայտեր, մոզայիքներ՝ գաղտակրի և մետաղներու վրայ :

Դ. Արդիւնք կապարձուելի ինչպէս՝ բրուտի սնօթներ, շինական գլխի խեցեղէններ, ծխելու գործիքներ, ծխափողներ, նարկէ և այլն :

Ե. Արդիւնք Գործածուելի ինչպէս՝ զէնքեր ոսկեով կամ արծաթով բանուած մետաղներ, զարդարուն, քանդակուած, թափուած սնօթներ :

Զ. Հնամենի ամեն տեսակներէ . գլխաւորաբար արուեստագործութիւնք :

Է. Նախնական նիւթեր ինչպէս՝ ծխախոտ, վարդիւղ, հոտեր, ֆանտիայի օճառ, շաքարեղէնք,

չաքարով եփուած պտուղներ, չոր պտուղներ, գլուղներ, սերմանիք, տորոններ, խէժեր, ըսպունգներ, քիթաններ, եղիպտոսի բամբակներ, ասոր, ուղտի ստե, այծենի, անթափ մետաքս, ծովի փրփուր և այլն և այլն :

Սոյն աշխարհահանդէսին զրկուելու նիւթերու համար Լէյրցիկի թուրքիոյ ընդհանուր հիւպատոսարանին կանխաւ յայտարարութիւն տրուել պէտք է զրկողներու կողմէ . Քայտարարութեանց պայմանաժամն կը տևէ մինչև առաջիկայ Մայիս 15 :

Ղրկուելու նիւթերն պէտք է Լէյրցիկ մտած լինին առաջիկայ Յուլիսի 21էն առաջ :

Հակերու ծածկոցի վրայ կողմերուն վրայ զրկողին անունն ու հասցէն նշանակուած պէտք է լինի այնպիսի կերպիւր որ կարելի չըլլայ ջնջուել կամ փրցուել :

Աշխարհահանդիսի շէնքին մէջ նիւթերու գրաւած տեղերու վարձագրին է :

Որմերու վրայ մէկ քառակուսի մէթրն ընդհանրապէս 5 ֆրանք. իսկ մեծադիր գորգերու համար նոյնքան տեղոյն վարձագրին է 3 ֆր. : Եւ շէնքին մէջ յատակի վրայ հորիզոնական դիրք մը գրաւող նիւթերու համար՝ գարձեալ մէկ մէթր տեղի վարձագրին է 15 ֆրանք :

Հնութեանց համար տեղոյ վարձագրին չկայ, ձրի կ'ընդունուին :

Վարձագրները աշխարհահանդիսին բոլոր աւտոլութեան համար է, և փակուելէն զինի վճարելի :

Ապրանքներու արժէքնոց հետ հարկ է նշանակել նաև նոցա որ քաղաքի և որ գործարանի պատկանիլը :

Անոնք որ Լէյրցիկի հրապարակի վիճակին վրայ հզարիտ տեղեկութիւն չունին, պարտին զիտնալ որ անոց ուս բան է զրկել այնպիսի ապրանքներ որոց գոյներն անհասոյ, կամ ներկն լեղակագոյնի վրայ է :

Չտփաւոր գնով ապրանքներու խիստ շատ և դիւրաւ գնուիլը աւելի ապահով է :

Անվաճառ մնացած ապրանքներն իրենց տէրերուն պիտի զրկուին աշխարհահանդիսին գոցուելէն անմիջապէս ետքը :

Ապրանքներու տեսակէ մը փոխանակ մեծ

քանակութեան, որոց փոխադրութիւնն բազում ծախք կը պատճառէ, պէտք է նոյն սեռին շատ տեսակներու ընտիր հաւաքում մի զրկել :

Ապրանքներ զրկողներու գիւրուութեան համար երկու գրաստան պիտի հաստատուի մին ի կ. Պոլիս միւսն ի Չմիւսիա . ուր պէտք են ուղղուիլ ամեն հակ, ծրար որ Լէյրցիկի աշխարհահանդիսին երթալու սահմանուած են :

Սոյն աշխարհահանդիսի Յանձնաժողովոյ անդամքն են . նախագահ՝ էմիլ Նոլաք ընդհանուր հիւպատոս թուրքիոյ :

Ատենադ պիր՝ Պէնիօ Ժէնիք, թուրքիոյ ընդհանուր հիւպատոսարանի գլխաւոր պիր :

Անդամք  
Յոսիօն Կառմ. հիւպատոս և վաճառական,  
Շարքի խորհրդական քաղաքի :

Լիբիուս. արքունի խորհրդ. և ճարտարագետ :

Սոյն աշխարհահանդէսն Պէրլինի օսմանեան գետնային վտ. Սատուլաճ-Պէյլի հովանաւորութեան ներքե է :

Կ Ա Ս Ս Ա Ն Դ Ն Ո Ի Պ Օ Լ Ի Ս

Ընթացող տարւոյ Օսմանեան նոր պիւտեճի զինի երկար քննութեանց, նախարարութեան կողմէ ընդունուելով Նորին կայսերական վեհափառութեան կողմանէ վաւերացաւ : Ներկայ ելմտական տարւոյն հասութից գումարն է 16, 155,840 ոսկի . իսկ ծախուց գումարն է 17,039, 250 ոսկի : Սոյն 883,410 ոսկուց բացը գոցելու համար կառավարութիւնն պէտք է կըլծ միջոցները պիտի խորհի յընթացք տարւոյն :

—Ռուսիոյ դեսպանատան պատկանեալ ֆիւմերու գնդապետն սպաննող վէյլի Մէհմէմէտի մտային վիճակը քննելու համար քանիցս բժշկոց խորհրդակցութիւններ կըլծ է, և ըստ Լէվնիթ Էրբըտի, բուական խեղճ գտնուել է . իսկ ըստ այլոց յիմարանոց փոխադրուել է :

—Ի նպատակի սովետաց և Ազգանուէր Հալախայ ընկերութեան պատրաստուած պարահանդէսն երէկ քիչեր արուեստ ամենայն փառաւորութեամբ :

Պարի սրահն ամենաքեղ կերպիւր զարդարուած էր : Ճակատը լուսաւոր մահիկներ կը ճառագայթէին, սրահին մէջ տեղը ֆուլսիոյ հո-

ՀՐԱՆՏ ԵՒ ԲԷՊԻՔԻ  
ՎԷՊ ՈՂԲԵՐԳՈՒԿԱՆ

(Տես լրագրոյն նախընթաց քիւղ :)

Իշխանուհի մեծ, որովհետև Չեզ անբաւ բարեբարութեամբն քան թէ իմարժանաւորութեամբ, թէպէտ ձեզ տարբեր ալ թուի, զիս այնչափ բարձրացուցիք մինչև ձեզի ամուսին ընտրեցիք, ձեզի հաճելի կըլծաք չեմ կրնար չընել. ստոյգ է որ խիստ մեծ գոհունակութիւն կ'ունենայի թէ ձեզ թագաւոր հօրը և իմ տիրոջ բարեհաճ հաւանութիւնն ևս մեր վրայ եղած ըլլար, բայց քանի որ ասիկա անհնարին կ'երևայ ինչպէս ձեզ նոյնպէս ինձ, իմ կողմանէ բնաւ արգելք մի պիտի չըլլայ ձեր բազմանաց լրումին, միայն թէ յուսալից եմ շնման աստուածոց բարեբարութեան վրայ, որ ինչպէս ձեր հօր միջոցաւ բարեբաստիկ սկիզբ ունեցաւ մեր սէրը, նոյնպէս և երջանիկ վախճան պիտի ունենայ :

Օրիորդը կարգէ դուրս գոհ ըլլալով այս խօսքերուն վրայ, չուղեց դանդաղ երկարում տալ իրաց, ուստի կանչեց իր սենեկակապետուհին ուրիշ հաւատարիմ սպասուհի մի ևս հետը, ու միւս բան խնդրելով այն դից օրհնութիւնը, որոնց համար պարտիկը կը հաւատան թէ ամուսնութեանց կը հսկեն, դրաւ Հրանտի մտաք խիստ մեծազին մատանի մի, և այն երկու կիներու ներկայութեանը հարսանեկան արարողութիւնը կատարեցաւ :

Բայց շատ չանցաւ, նախանձաբեկ բազդը ասանց քաղցր հաճոյքներուն մէջ այնպէս սաստիկ գառնութիւններ խառնեց՝ որ բոլոր նոյն հաճութիւններն հետեւորդ վշտաց առջև ոչինչ եղան : Որովհետև Պարթևաց թագաւորին միակ որդին իրեն համար կնութեան խնդրեց Սուլէյ-

մանի աղջիկը, և հայրն որոշեց տալ զանի անոր ինչ կերպիւր իսկ և ըլլայ : Ուստի կանչեց Բէպիքէն իր բով, ու շատ զգուանքներէ ետև, զուարթ գիծք բուս անոր :

Այդ ժամանակը եկած հասած է, իմ ամենասիրուն աղջիկս, որ ընդունիմ քեզմէ այն միտքով արութիւնը որ երկար ատենէ ի վեր կ'ահկնալէի . որովհետև Պարթևաց թագաւորին միակ զաւակը այն չքնաղ ու գերազնիւ երիտասարդն, միանգամայն խիստ մեծ ու ամենահարուստ գահի մը ժառանգն՝ զքեզ ինձմէ խնդրած ըլլալով, որոշեցի զքեզ տալ անոր կնութե և ստոյգ գիտնալով որ դու իմ կամքիս գէտ չես խորհրդ, և թէ խիստ գոհ պիտի ըլլաս այն վիճակէն որ քու բարեոյգ համար ինձի հաճելի է, արգէն խոստացայ զքեզ անոր՝ ապահով ըլլալով որ դու անոր հետ խիստ գոհ կ'ենակցութիւն պիտի ունենաս :

Սայրասուր գառնի մի կարծես՝ այս խօսքերուն հետ Բէպիքէի սրտին մէջ խրեցաւ, բայց կրցածին չափ թագուցանելով իր տագնապը՝ ըսաւ իր հօրը . թէ՛ իր վրայ ունեցած սէրը այնքան մեծ, այնքան եռանդուն էր՝ որ ստուգի իր հետ միշտ համակամ կուղէր մնալ, բայց այն անգամ կը համարձակէր հաճիլ, ոչ եթէ անոր հաճելի երևցած բանին գիտագրելու և չէ թէ իր այնչափ սիրելի հօրը իր վրայ ունեցած իշխանութեան տանիլ չուղեւրուն, այլ միայն զի անոր քովն բաժնուելով հեռացած կ'էտին՝ անտարակոյ պիտի մեռնի : Այս վերջին խօսքերուն հետ այնչափ ջերմ ու յորդ արցունքներ ընկերացան, որ այլևս չկրցաւ բան մի արտարելու (թէ և այն արցունքները չէ թէ հօրը սիրոյն համար էին, ինչպէս կը ձեռնարկէր, այլ միտքը բերելով իրեն համար պատրաստուած թշուառութիւնները) : Թագաւորը կարծելով թէ այս

ընդգիտութիւնը անոր իր վրայ ունեցած սիրոյն արգելքն է, մտքէն մեծապէս գոչեց զանի, ու գորովալից համարելով անոր ճակատը՝ բոլոր իր ուժովը ջանաց անոր սիրտը սիւսիւլ, և ըսաւ . թէ՛ անիկա իր հետը ապրելու համար չե՞մնած, և այս կարևոր կէտին վրայ խորհելու չորս կամ վեց օր ժամանակ կուտայ, լիովին համոզուած ըլլալով զի երբ սկսի լաւ մտածել այս քաջայարմար ու խիստ պատուաւոր առաջարկութեան վրայ, անշուշտ սրտովն հաւատութեամբ իր որոշումը պիտի տայ : Եւ այսպիսի խօսքերով արձակեց զինքն երթալ իր սենեակը :

Բէպիքէ իր սենեակը մանելով շատ մը իրեն կանչեց հաւատարիմ ու սիրելի գայեակը, ու արտասուալի աչերով ու դառն հեծեմանքով հօրը ըսածները անոր յայտնեց, և աղաչեց որ իրեն մտերմաբար խորհուրդ տայ : Գայեակն սկսաւ իմաստուն կերպիւր սիւսիւլ անոր սիրտը որչափ որ կրնար ու մինչեւ Բէպիքէ կուլար ու գայեակն ինձամ կըրտակէր անոր, վրայ եկաւ Հրանտ և իրաց պարագաներն իմանալով, շատ մը իր սրտին զգացած գառն տագնապը ծածկեց ու զուարթ գէմք մի ցուցնելով փարեցաւ անոր ու «Սրբեցէք, ըսաւ, աչքերնուդ արցունքներն որ անարժան են ձեր այն վեհազն ոգւոյն զոր իմ ըլլալու ատեննիդ ինձի ցոյց տուիք, առէք վրանիդ գարձեալ ձեր սրտին վեհութիւնը, և կասկած մ'ընէք բնաւ իր թէ ինչ ընելիքնիս չգիտնանք այս պարագայիս մէջ : այլ ապահով եղիք, զի ինչպէս ուրիշանգամներ նոյնպէս այս անգամ ևս հակառակորդ բազդը չի վրայ յայլմական պիտի հանդիսանամք : Եւ այսպէս անոր սիրտը հանդարտեցնելով Հրանտ ներքին տրամուտիւնէն գրեթէ ոգետապաւ ինքն նին գնաց թագաւորին :

Թագաւորն անմիջապէս եղելութիւնը յոր

տաւէտ ջար սիւսողադրելը մը կար : Եւրոպական երաժշտաց խումբէն զատ պիտուորական նուագածուաց խումբ մ'ալ կար , որք Օսմանեան և Եւրոպական բնակը նուագներ կ'աժէին :

Ամեն ազգէ և երկու սեռէ բազմաթիւ ախար նաւոր անձինք ներկայ էին . վեհ Ղազի Օ ման փաշան չկրնալով ներկայ գտնուիլ , անոր տեղ կրնախաղահէր Յէրիգ փաշա մը քանի մը բարձրաստիճան սպայից հետ :

Պարբերան առք միջոցին յանկարծ ստահին կամարին վրայ հրեշտականման գիցուհի մ'երեցաւ , որ զամբիւղի մը մէջէ հազարաւոր ծաղկի փունջեր և շաքարեղէններ տեսցայ հանդիսականաց վրայ և յետոյ աներեւոյթ եղաւ ի հիացումն հանդիսականաց :

Ձինուորական նուագարանք «փառիչաճըմ» յոգեաշատ երգը նուագելուն , հանդիսականք բուռն ծափահարութեամբ պատասխանեցին :

Պարբեր մինչև առաւօտ տեսցին ամենայն կանոնաւորութեամբ , և լաւ մը լուսնայէն յետոյ հանդիսականք մեկնեցան գեղազուարճ երեկոյթի մը յիշատակը տանելով իրենց հետ :

—Աղբիւնուպոլսոյ ստիկանութեան գլուխ անգղիացի Պիլենզ գնդապետը մշակութեան գործիք մը հնարած է , որուն փորձն եղաւ անցեալ շաբթու Այսթեֆանօսի դաշտին մէջ ի ներկայութեան հմուտ անձանց , և խիստ օգտակար գատուեցաւ երկրագործութեան համար :

Այս գործիքը կամ մեքենայն առանց կենդանեաց օգնութեան կրնայ գործածուիլ երկու մարդոց միջոցաւ , և այնչափ ալ պարզ է եղեր , որ ամենէն անփորձ ատաղձագործը (Սօպրամանի) կրնայ շինել :

—Ամենա Ս. Պատրիարք Հայրն որոշեր է որ եօթը գիշեր հսկում լինի մայրաքաղաքին բոլոր եկեղեցեաց մէջ Աստուածային ողորմութիւնն հայցելու համար որպէսզի սովոյ աղէտալի հարուածն անյնի :

Ամենայն հաճութեամբ կը հաւանիմք այս քրիստոնէական պարտաւորութիւնը կատարելու , և կ'առաջարկեմք իսկ որ մեր քաղաքի եկեղեցեաց մէջ ևս կատարուի այն , երանի թէ նոյնիսկ բոլոր ազգաց ձայներու միաբանութեամբ աղօթակից լինիմք առ Աստուած որ աշխարհիս վրայէն վերցնէ այն աղէտալի պատուհասն որ շատ անգամ մարդկային անիրաւ կրից արգելէք ետ :

նեց Հրանտին , և հասկցուց անոր թէ ինչպէս խօսեցած էր Բէպիքէին և ինչ պատասխան բնդունած անկէ . և որովհետեւ քաջ կրճանալմ , ըսաւ , որ դու խօսելու մասին լուրջ ես և պերճաբան , վասնորոյ կ'ուզեմ որ երթաս աղջկանս սիրտը ողբքեա , և ամեն ճիգդ թափես այնպիսի տղայական կարծիքներն անոր մտքէն փարատելու , համոզելով զինքն թէ աղջիկ զաւակներն իրենց հօրը հետ կենալու համար չեն ծնած այլ կնութեան երթալու արանց : Եւ Հրանտ մեծ յօժարութեամբ գործը վրան առաւ , ու Բէպիքէին քովը դառնալով հօրը ըսածները անոր հազարգեց , ու մէջերին պատասխանը յօրինեցին :

Վերագառնալով Հրանտ թագաւորին քով , ըսաւ անոր թէ իր հրամանին համեմատ Բէպիքէին հետ խօսեր է , և թէ անիկա ի պատասխանի իր մեծ զարմանքն յայտնեց է թէ ինչու հայրն խորհած է որ իր խօսքերէն աւելի ստարի մը խօսքերն ազգեցիկ կրնան ըլլալ իր աղջկան սրտին , և թէ ինքն ինչ որ այս պարտաւորայիս մէջ պէտք էր ըսել արգէն ըսած ընդհանրեցած է եղեր , այսինքն թէ իր հօրը վրայ ունեցած այն մեծ ու ոչ եվաւ սէրն եթէ արգելք չըլլար , արգէն յօժարափոյթ ու պատրաստ պիտի լինէր անոր սոյն կամքին համահերթիլ , բայց և այնպէս ինքն (այսինքն Հրանտ) բոլորովին վստահութիւն կը յայտնէր թէ աղջիկն վերջապէս իր հօրը կամքը պիտի կատարէ :

Այս միջոցիս տեսութեան քանի մը քաղաքներու մէջ ծագած ալմուկներու և շփոթութեց պատճառաւ հարկն ստիպեց որ թագաւորն իր մայրաքաղաքը Սուզա թողլով 8 կամ 10 օրուան ճանապարհ հեռի երկիրներ երթայ , ու մեկնելու ամենը բոլոր տեսութեան ու պալատին վարչութիւնը Հրանտին յանձնեց : Ուստի Հրանտ

զոյ պատերազմերու , աւերածներու և երբեմն անհետաւետութեանց և հեղուկութեան յանցանքներու պատիժն է :

Ընդ սմին կ'առաջարկեմք նաև որ բարձրագոյն իշխանութիւնն անպարզական հրահանգ տայ պետութեան բոլոր երկիրներու , հարկագրելով բոլոր հողատէրերն որ ընթացող տարւոյս մէջ իւրաքանչիւրն իւր արան ու դաշտը եթէ ոչ ամբողջապէս գէթ ըստ կիսոյն ցորեն և երկրորդապէս գարի և արձախ ցանէ անպատճառ , և ոչ բամբակ կամ ուրիշ բան , որպէսզի Աստուծոյ յաջողութիւնը և մեր աշխատելովը սովը հալածուի , և լիութիւնը վերադառնայ :

### Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Քաղաքիս յարգի և պատուաւոր ազգայիններէն ոմանք կենսական խորհուրդ մի յոացան , այն է՝ աղբալին յառաջողութեան և լուսաւորութեան նպատակը ընկերութիւն մի կազմել : Եւ իրօք տարւոյս սկիզբներն քաղաքիս մէջ կազմուեցաւ նորահաստատ Սիւն ԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ որոյ նպատակն է , Արտաւորութեան Զարգացումը յառաջարկելու և նպաստելու : Հաճութեամբ սրտի կ'հրատարակեմք նորակազմ ընկերութեան հետեւեալ յայտաց իրն . որ կըզարուանկէ իւր նպատակի մի քանի կարևոր հանգամանքները , և իւր կեդրոնական Գործադիր Մասնաժողովոյ և Ընդհանուր Ժողովոյ պատուարժան անգամայն անուններն :

Կըհրաւիրեմք ամեն Հայ և օտար մարդասէրներու ուշադրութիւնը սոյն նորակազմ ընկերութեան վրայ , որ համակիր սրտի արդեամբք խրախուսեն նորա սկզբնական քայլերն . որում յարատուութիւն և ազգայէն արգասաւորութիւն կըբարեմայլթեմք :

### Ս Ի Ի Ն Ե Ա Ց Ը Ն Կ Ե Բ Ո Ւ Թ Ի Ն

Արտական Թուրքոյ Հայրանակ քաղաքներուն մէջ զպրոցներ հաստատելու կամ հաստատուածները բարւոքելու , և այս կերպով ազգին մտական և բարոյական զարգացման նպատակը նպատակն ունեցող շարժում մը կոյ մայրաքաղաքի ազգայիններու մէջ և այլուր :

Չմիւռնացիք սոյսպիսի հայրենասիրական ջանքերով թիւններու առջև չլին կրնար բոլորովին անտարբեր մնալ : Պարտ էր մեզ այս ազգափրական նպատակը յա-

և Բէպիքէ իրենց թշուառութեան գարման մի գանկու հանգիստ ժամանակ ունեցան , և միաբան որոշեցին որ փախչին Հայաստան երթան : Ժողովցին առին իրենց հետ ինչ որ պէտք էր ճանապարհին համար , թագաւորին գանձէն իսկ ինչ որ իրենց հաճոյ թուեցաւ և ինչ որ խիստ մեծ արժէք ունէր՝ առնելով , այնպէս ձեւացուցին թէ՛ զուարճութեան համար գեղեցիկ գրօսավայր մի կ'երթան մայրաքաղաքէն 15 փարսան հեռի , ուր սովոր էր իշխանուհին իր գայեակին և հօրը տուած աւագ անձերու ընկերութեամբ երթալ : Նշանակեալ վայրն հասնելով գիշեր մի վեց օգտապարիկ նժուղներու վրայ կը հեծնան Հրանտ , և իր կինն , երկու հայաստանցի հաւատարիմ ծառայներով , գայեակն ու սպասուհին որ ներկայ եղած էին անոնց ամուսնական ուխտագրութեան , անսովոր ճամբաներով քաջաբար ապահովելի ուղղոյն երկայնութիւնը կ'սպասեն : Կուգան կըհասնին կասբիական ծովափունքն , ուրկէ թեթեւ ու սրընթաց նաւ մի կրմանն ու հարմուռոյց աւագ աստներով կը թռչին կ'երթան ծովուն մէկ ծայրէն միւս ծայրն , մինչև որ Հայաստանի հողը համբուրելով կ'ելնեն ցամաքը , և ահա ազատ ամեն վասնդէ կըգանն ինքզինքնին :

Բայց Բէպիքէի սովորական դրօսավայրն , ուրուն համար քիչ մ'առաջ խօսեցանք գեղեցիկ դաստակերտ մ'էր ուր տեղի մարդիկը ամբողջ նոյն գիշերն մինչև հետեւեալ կէսօր Հրանտի համախուժ փախուստին վրայք բան մի նշանրեւ չէին կրցած , որովհետեւ երկուքին իսկ սենեակներն փակ էին , և մէկը չէր կրնար դուռերը զարնելու յանգգինի : Ժամանակ անցնելով զարմանքն ու հետաքրքրութիւնը բոլոր դաստակերտին մարդոց մէջ կըտիրէ , սենեակները

աջողորդներուն փորր ի շատ և մշակելի մեր կարողութեան համեմատ՝ առանց կանխաւ մեծ մեծ խոստումներ ընելու և այժմէն փոստարուելու , և ահա՛ այս պարտքը կատարելու և հանդարտ խղճ մը կրելու փոփոյրը քաղաքիս երեսնին շափ անձերը յորդոց հիմնելու ընկերութիւն մ'որոն անգամակցութեան , բաժանորդագրութեան պայմանները , գործողութեան միջոցներն և կազմութեան հանգամանքը կանոնադրութեան մը մէջ ամփոփուելով պիտի հրատարակուին :

Նորակազմ ընկերութեան անունն է Սիւնեաց Ընկերութիւն , որ ունի իրեն նպատակ Ասիական Թուրքոյ Հայոց մտաւորական յառաջողիմութեան նպատակ :

Կենտրոն վեհերութիւնն ունի Համազուճար , Ընդհանուր և կեդրոնական գործողութիւնը ժողովներ :

Անգամ է ընկերութեան ուղ որ տարեկան մէկ Մէծիտի կըվճարէ :

Ընդհանուր Ժողովոյ անգամայն ընտրութեան կըմասնակցի ուղ որ տարեկան մինչև երեք բաժնեկի կըվճարէ :

Ընդհանուր Ժողովոյ անգամ կրնայ ընտրուիլ ուղ որ տարեկան երեք բաժնեկի զատ նաև ամսական կէս կամ տարին վեց Մէծիտի կըվճարէ :

Ընդհանուր Ժողովոյ ներկայացուցիչն է կեդրոնական Գործադիր Մասնաժողովն , որոյ այս տարուան անգամներն են , այնոնոյք

- Տօրոք Պօղոս կոստանդեան Սեւնայեց
- Յակոբ Վեհեան, Սեւնայի
- Գուրգէն Եսայեան, Գանձայեց
- Յովհաննէս Չարբեան,
- Յովհաննէս Մարտիոսօծ
- Ռուբէն Խ-Աղապարեան .

Կրթիկներ արդ ամեն Հայ և օտար մարդասիրներու ստատուեմութեան՝ մեր Գործադիր Մասնաժողովոյ գործակցութեամբ , և կըյուսանք թէ մեր հրաւերն անընդհատ պիտի չմնայ , և թէ լուսաւորութեան ամեն բարեկամներն ու մարդասիրները կարեկցաբար պիտի պատասխանեն այն աղերսալի նայուածքին , զոր Ասիական Թուրքոյ Հայերուն շրտար մասն անոնց վրայ կըյուսէ բարոյակա յարութիւն առնելու , և իրենց բարեբարները օրհնելու համար :

### Ս Ն Գ Ա Մ Բ Ը Ն Գ Ը Ա Ն Ո Ւ Թ Ի Ն Թ Ո Վ Ո Ց

Ս Ի Ի Ն Ե Ա Ց Ը Ն Կ Ե Բ Ո Ւ Թ Ի Ն  
Սեւնայեց , Պ. Մ. Ալիբաբեան  
Փոխ-Սեւնայեց Գ. Յ. Բարազեան  
Սեւնայի Գրիգոր Չիլիկիբեան  
Փոխ-Սեւնայի Գ. Պուլիի

Գարբիէ Ճմարտախօսեան  
Գերոզ Կիստեան Յակոբ Վեհեան  
Գերոզ Կարաբեան Յարութիւն Ոհարօեան  
Խաղաք Յ-Սպարթայեան Յօնանէս Մարտիոսօծ

կրբանան , մարդ չեն գտներ , ու տեսնելով որ գտնին մէջ ձիերը չկան և ոչ իսկ անոնց վերահսցու ծառայները , կարծիք ըրին թէ՛ գուցէ թագաւորէն՝ գազանի հրաման ընդունած՝ լլաւով , առանց գորգիւն հանելու , գիշերով մայրաքաղաքը գարձած ըլլան : Ուստի շուտ մը մայրաքաղաքը վազցին իրիկուան վրայ , ու տեսնելով որ Հրանտ և իրեններն չկան , գուշակեցին անոնց դադարի փախուստը : Ամենքն միաբան կ'ըսէին թէ՛ արժանապէս այս անարգանքն եղաւ թագաւորին , զի իր ազգային նախարարներէն շատ աւելի թշնամի աշխարհէ եկող օտարականի մը վրայ դրած էր իր վստահութիւնը : Եւ շուտ մը ձիաւորներ հանեցին որ փախուսականներուն ետեւէն վազեն , ու թէ որ գտնեն , իմաց տան անոնց որ մայրաքաղաքին մէջ անել ու խաւար բանտեր կ'սպառնան իրենց ու առնեն բերեն , և անմիջապէս բոլոր եղածը թագաւորին իմացուցին :

Այս դառն գուժին վրայ թագաւորն սրտին ցաւէն գրեթէ կիսամեռ լինկաւ , ու երբեմն Հրանտի անհաւատարմութիւնն , երբեմն իր աղջկան թեթեւամտութիւնն ու կեղծ հայրենասիրութիւնն կշտամբելով , երկար տան սիրտը վշտահար մարմնեղէ ետե՛ ինքզինքնին գալով՝ միտքը գրաւ չարաչար վրէժխնդրութիւն ընելու ստի շուտ մը մայրաքաղաքը վերադարձաւ ի շարամիտ խորհրդով : Եւ իմանալով որ Հրանտի ետեւէն պնդող հետամուտներն չէին կրցած հասնիլանոր , գիտնալով նաև՝ որ անիկա Բէպիքէին հետ Հայաստան ապաստաներ է , որչափ որ անհայտ սխուժիւններ իսկ ունէին մէջերին որոշեց գետապաններով բանակցիլ Հայոց թագաւորին հետ , որպէսզի զանոնք ձեռք ձգէ :

(Պիտի շարունակուի)

Խնայողութեան օրն ցնես Չարեան	Ոսկան Ոսկեան
Կարապետ Սրբապետ	Պողոս Կոստանդեան
Կարապետ Յակոբեան	Պողոս Կ. Տիպեբեան
Կարապետ Սերբեան	Ռուբէն Խ. Միգաբեան
Կարապետ Ա. (պարբայ.)	Սահակ Ա. Ետիպեան
Ղուկաս Եսայեան	Սարգիս Ճեպեան
Մարտիկ Մամուրեան	Սարգիս Պապիկեր
Մեսրոպ Կոստանեան	Սարգիս Սրբապետ
Մկրտիչ Եսայեան	Ստեփան Տեառեան :
Մերկեր Մերկերեան	

Զմեռնիս, Յունիս 1880 :

—Ազգային վարչութիւնն երէկ յանձնեց մինաւակ և մի ժապատինեալ տետրակ յանուն Մեծ. Պ. Մարգար Խ. Էփրէլէր մեր ազնիւ հայրենակցին որ տարիէ մը ի վեր վաճառատուն հաստատած է ի Լիոն, առաջարկելով նմա որ Հայաստանի սովորոց համար հանգանակութիւն բանայ Գաղղիոյ այն քաղաքաց մէջ, ուր որ յարաբերութիւն և ծանօթներ ունի, և հանգանակութեան արդիւնքն և նուիրատուաց անուններն հետզհետէ յուղարկէ զորս Ազգ. վարչութիւնն պիտի փութայ հրատարակել շնորհակալու մտօք :

Քաջայայտ եմք որ մեր Մեծ. հայրենակիցն, որ յօժարաբար է սոյն մարդասիրական ընդհանուր գործոյն աշակցել, մեր խղճալի հայրենեաց անհնարին տառապանքն ու թշուառութիւնն ինչպէս որ է՝ նկարագրելով, եւրոպացի վեհանձն մարդասէրներու առատաշնորհ նուէրներովն Հայաստանի մեր սովորանջ եղբարց սիրտինք պիտի հայթ հայթ է :

Համակրանաց արժանի է նաև Մեծ. Պ. Գրիգոր Խ. Էփրէլէր մեր ազնիւ բարեկամին ազգասիրական եռանդն, որ սովորոց համար Ազգ. վարչութեան ըրած ջանից ակնատես ամենայն համարձակութեամբ առաջարկած է Ազգ. Քաղ. Ժողովոյ որ սոյն հանգանակութեան աշխատութիւնն իւր հարազատ եղբոր Մեծ. Պ. Մարգար Խ. Էփրէլէրի յանձնուի :

Տ Ա Ր Ե Լ Ի Ք

Նուէր Բարեպաշտ Ժողովրդեան Զմեռնից  
Ս. Լ. Կիւսիսեանի Հայց 1879 խաւանի  
Մեծապատիւ Տեառք,

Մկրտիչ Մանտարեան	8:10
Հաճի Պաղտասար Ճերմակեան	8:10
Սարգիս Պաղապանեան (վաճառական)	16:20
Յովհաննէս Քէսիկպաշեան	7:20
Յովհաննէս Մարութեան	16:20
Յովհաննէս Չաքիեան	4:20
Պողոս Քոզաթեան	17:10
Սարգիս Սարաճեան	7:20
Խոսրով Մարտիկեան	16:20
Եղբարք Ճէլէպեան	16:5
Եղբարք Գ. Ճէլէպեան	33
Պողոս Ճէլէպեան	66
Սարգիս Սիմոնեան	16:20
Ստեփան Գաղէլ	7:20
Յակոբ Մորուքեան	24:30
Ալէքսան Զանաքքալէիան	16:10
Յարութիւն թորոսեան	15
Սարգիս Քէշիշեան	16:20
Ստեփան Ճէվայրճեան	66
Եղբարք Ս. Սպարթալեան	70
Խաչատուր Աւագեան	97:20
Մկրտիչ Մինթանճի	16:30
Մեղքոն Հալէպեան	33
Սարգիս Համբարձուեան	16:10
Խաչատուր Մարգարեան	82:20
Թորոս թագուրեան	8:10
Մովսէս Թեւիկեան	33
Աւետիս Պատմաճի	15
Եղիա Պինեթեան	83
Սարգիս Աքճալեան	16:20
Մարկոս Մամուրեան	16:20
Յարութիւն Երամեան	3:30
Դէորդ Աւանդատար (էմանէթճի)	16:10
Եղբարք Էլմասեան	132
Հաճի Պողոս Դաւիթեան	24:30
Դասպար Խորայէլեան	16:10
Յովհաննէս Իլիկճեան	33
Մովսէս Գըրքաղաճցի	7:20
Յարութիւն Մուրատեան	3:30

Ղազարոս Դաւիթեան	16:20
Յակոբոս Բաբաղեան	8:10
Մեսրոպ Բաբաղեան	16:10
Յովհաննէս Պաղապան	9
Յարութիւն Երեմիական	4:20
Եղբարք Պէրկամալեան	100
Մանուկ Չաքճեան	7:20
Հաճի Միքայէլ (Եօրղանճի)	7:20
Գասպար Ալէքսանեան	10
Եղիա Զանգճեան	33
Կարապետ Շահինեան	33
Թովմաս Մ. Յակոբեան	99
Թագուր Առաքէլեան	66
Յովհաննէս Ներսէսեան (սահաթճի)	33
Կարապետ Քէսիկպաշեան	9
Ղազարոս Պաղապանեան	15
Եղիա Աւագեան	7:20
Կարապետ Խաչատուրեան	16:10

(Մնացեալն յաջորդ քուով :)

—Մեծա. Յովսէփ Իլմարեանց Ղազարեցի, որ ծանօթ է մեր ազգայնոց իւր ուսումնասիրական ազնիւ բնաւորութեամբ, բարեհաճած է ներկայ 1880 տարւոյն Յունուար ամսին սկսեալ Փոքր 1880 ազգային և գրականական միամսեայ ՀԱՆԴԵՍԻՆ մի մի օրինակ նուէր զրկել Զմեռնից Ս. Մեսրոպեան և Հոփօթիմանց վարժարանաց համար որոյ մասին գաւառիս Ուսումնական Խորհուրդն իւր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ :

—Ի դէպ կհամարինք առաջարկել և խնդրել հայազն հեղինակներին իւրեանց համար անգլալի նուէր անելայտու հետ իւրեանց հեղինակութիւններն մի օրինակ ճեմարանի և մի օրինակ Մայր Աթոռի մասնադպրաններին թէ լրագիրներ թէ գրքեր և թէ առհասարակ որտեղ ինչ որ հրատարակվելու է, նախ սորանով ծանուցակած պիտի լինին կարևոր հարուստ հայկական մատենադարան կազմելուն, և երկրորդ մի հաստատուն մնայուն տեղ պիտի որոշվի ամենայն հայերէն հեղինակութիւններն ժողովելու, մինչդեռ քանի մի տարի առաջ, չասնք շատ հեռու, թիֆլիզում հայերէն հրատարակված կովկաս լրագիրն, օրինակ, դժուար թէ որեւիցէ տեղ կգտնէ ցանկացողը, այլ էլ միամտին մատենադարանում ամենայն հրատարակութիւնները կարող են պահպանված լինել միշտ, և յուսանք որ հայազն հեղինակներն համակրելու են այս օգտաւէտ առաջարկութեանը և խնայելու չեն իւրեանց հեղինակութեան երկու օրինակը ընդհանուր ազգային մատենադարան մի հիմնելու և կազմելու համար : Թող յուսանք որ հայկական պարբերական հրատարակութիւնները համակրութեամբ արտոտայելու են այս օգտաւէտ առաջարկութիւնը և իւրեանք գործակից լինելու են այս գրականական արժէք ունեցող գործին, որ ազգայ սերունդը պիտի գնահատէ անշուշտ : Ուղարկելի գրքերն, առաւել ապահովութեան համար, վեհա. Հայրապետը բարեհաճեց թղթաբեղ իւր անունով ուղարկել, նշանակելով ծրարի վերայ. «Մայր Աթոռի կամ ճեմարանի մատենադարանի համար» : ԱՐԱՐԱՏ

ՏԵՂԵԿՆԵՐ Ի ՈՒՐԵՐ

Գաւառիս շրջակայքերէն եկած լուրերն կը ծանուցանեն թէ մարտի սերմերու ահագին քանակութիւն տեղ տեղ երևան ելած է, և հետզհետէ եղանակի տաքութենէն բացուելու վրայ, թէև բոյժրատու կուտական, վերջին օրերս Մանիսա երկաթուղոյ կայարանէն դէպ ի կէտիդ շինուելու ճանապարհը տեսնելու գայած ըլլալով, ստիպող հրամաններ տուած էր այդ փաստակար միջատներու առաջն առնելու համար, սակայն յիշեալ հրամաններու և կարգադրութեանց գործադրութեան մասին քանի որ արթուն հսկողութիւն կը պահուի տեղական կառավարութեանց կողմէ, հարկաւ գաւառիս առաջիկայ հունձքերն, այսինքն վերջին ցուրտերէ անփնտա մնացողներն ևս կրնան ոչնչանալ, որով արդի տիրող սղութիւնն աւելի ծանր կերպարանք առնու : Վանորոյ կը փութամք տեղական կառավարութեան խորին ուշադրու-

թիւնը հրաւիրել յուսալով որ սոյն սպառնացող աղիտից առաջն առնելու համար եղած ազգու միջոցներն անյապալ ի գործ կը դրուին :

Կիւսիսեան թէ մարտի ծնունդներ արդէն Հաճըլար գիւղի մօտերը երևան ելած են. և եթէ առաջն շառնուի Պուրնապատ գիւղի գաշտերն ևս աննցմով պիտի ծածկուին :

—Անցեալ ուրբաթ անգլիացի մի, որ երկար տունէ է ի վեր անգլաբաններ Տիւանդուլեան մի կը տանջուէր, ինքզինքը սպանեց ըրվով իր հարուստ իր բերանը պարպելով : Անմիջապէս մեռաւ, և մարմինը անգլիացուց հիւանդանոցը տարուեցաւ :

—Եամանլար գիւղի մօտերը մահմէտական մանկան մի գիւղի գտնուեցաւ, որոյ վրայ շատ վէրքեր կը տեսնուէին, և վեցամեայ կ'երևէր :

—Քէսթանէճի օղլու առաջակալութեան իր խրմբով Այոթնի ճամբուն մօտ Պալաթճըքի կողմերը գտնուիլը իմացուելով՝ կառավարութեան կողմէ հետամուտներ զրկուած են ձերբակալելը :

—Մանիսայի կառավարութեան առաջին ժողովին նախագահ Նէճմէտօֆէն էֆէնտի, որ իր նախագահութեան ներքև շատ զեղծումներու գործող ամբաստանուած էր, վիճի երկար գտնուեցան թեմայի երեքամեայ բանասիրութիւն գատապարտուեցաւ :

—Անցեալ կիրակի գիշեր գէպ ի լոյս երկու շարթի մի քանի ծովասպասակներ անակնկալ կերպիւ յարձակելով Արշակազգուսի կղզիներն երթեկեկող փոքր նաւի մը վրայ, որ իլմիքն մեկնելով գետ այնինչ հասեր էր Չաֆալա-բնու կոչուած, տեղը նաւապետը կը լիբաւորեն, քովը գտնուած 10.000 դրուքը կ'առնու, նաւաստիներն մին, որ գիւմարեւ կ'ուզէր, ծովը կը նետեն : Կը յարձակին այնուհետև ուղեորաց վրայ, որք 15ի չափ նիքարիացի յոյն սպասակներ և ծիծաղներ էին, որոնց և տարիներ ի վեր ծառայութեանց և խնայութեան արդիւնքն ևս յափշտակելով առտուան ժամը 4ին խոյս կուտան : Երկու շարթի առտու նաւը քաղաքս կը վերադառնայ. ոստիկանութիւնն իմանալով հիւանդանոցներ կը հանէ շարագործաց ետեւէն :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոնէն եկած լուրերն կ'իմացունեն թէ բոլոր պաշտօնակարներն Ուիլիամսօրի մէջ ի խորհուրդ գումարուեր են ընդ նախագահութեամբ վեհափառ թագուհւոյն :

—Ուրախ սրտիւ կ'իմանամք թէ Ն. կայսերական վեհափառութիւն Ալէքսանդր կայսրն բարեհաճեր է 10.000 ֆր. յուղարկել առ Ամեն Տէր Ներսէս Ս. Պատրիարք Հայրն Հայաստանի սովորոց օգնութեան համար :

—Անգլիական մասնագունդ մի քէթթահէն անդին Աֆղաններէ շարուեր է : Քէթթահէն դէպ ի քանտահար ճանապարհը գոցուած է :

—Ոչարտօնաւոր կրօնական միաբանութեանց մասին Մարտ 29ին ելած հրամանագրին դէմ Գաղղիոյ ձերականտի աշխարհմաններուն մէջ իրաւասական խորհրդակցութիւն մի պատրաստուելու վրայ է, որոյ նպատակն է ցուցնել յիշեալ հրամանագրի ապօրէն լինելը, և արգարացնել միաբանութեանց ընդգիւմութիւնը :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Անիոն վերջին գիշերուն վրայ 10 դուրուշի նուազում եղաւ : Գարահիսարի վերջին հունձքէ 40 կ'ուղվ վաճառեցաւ շէքին 240 դրուշի :

ԲԱՄՊԱԿ սորա գինն ևս դէպ ի նուազում կը մտնի : Վաճառեցան 70 հակ զտուած կենդինարք 450 դրուշի, և 90 հակ Ատանա 425 դրուշի :

ԲԱՄՊՈՒՏ նոյն գրութիւն. բանուած և չբանուած 9500 կենդինար վաճառեցաւ 76 1/2 էն մինչև 100 դրուշի կենդինարք. իսկ Մեջնա-քի ընթացիկ տեսակէն 600 կենդինար վաճառեցաւ 122 1/2 էն մինչև 132 դրուշի կենդինարք :

Տէր Լրագրոյս,

Գ. Կ. Պալապաշեան :